



ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Բովանդակություն

Հետազոտության մեթոդաբանություն	3
Մեթոդաբանական հենք.....	3
Մասնակցայնություն	3
Տվյալների հավաքագրման գործիքակազմ	3
Արդյունքներ/բացահայտումներ.....	5
Ներառական քաղաքականություն.....	5
Աշխատակազմի գիտելիք և հմտություններ	6
Ռեսուրսներ.....	8
Մատչելիություն	8
Աջակցության թիմ	8
Ռեսուրս-սենյակ	9
Վերաբերմունք	10
Ներառական կրթությունը նպաստում է մանկավարժության զարգացմանը. Դրա շնորհիվ ուսուցիչները ավելի շատ փորձ են ձեռք բերում և հմտանում իրենց աշխատանքում, որից շահում են բոլոր երեխաները:	11
Ծնողների մասնակցություն	12
Ծնողների գոհունակություն.....	13
Ներառականության լայն հասկացմամբ	14
Հավելված 1. Դպրոցների ներառականությանը ուղղված մոնիթորինգային այցի ձևաթուղթ.....	15
Հավելված 2.1. Հարցաթերթ ծնողների համար	21
Հավելված 2.2. Հարցաթերթ ուսուցիչների համար	27
Հավելված 3.1. Ուսուցիչների շրջանում ֆոկուսխմբային քննարկման ուղեցույց	33
Հավելված 3.1. Ծնողների շրջանում ֆոկուսխմբային քննարկման ուղեցույց.....	35


Ներածություն

«Մովորել միասին, ապրել միասին» ծրագրի շրջանակում Հուլիսի կամուրջի նախաձեռնությամբ և քաղաքացիական հասարակության մասնակցությամբ իրականացվել է Տավուշի մարզի դպրոցների ներառականության գնահատմանն ուղղված հետազոտություն:

Հետազոտությունը համապարփակ ձևով ներգրավվել է կրթական գործընթացի բոլոր կողմերին՝ դպրոցների սնօրինություն, ծնող, ուսուցիչ՝ հաշվի առնելով տարբեր հաշվի առնելով դիրքորոշումները:

Տավուշի մարզի բոլոր դպրոցները ներառական են: Հետազոտությունը ցույց է տալիս, որ որդեգրած քաղաքականության և վերաբերմունքի տեսանկյունից դպրոցները ունեն բոլոր աշակերտների ներառման բարձր մակարդակ: Մարտահրավերները ավելի ընդգծված են ռեսուրսների՝ հատկապես հոգեբանամանկավարժական թիմերի գործունեության ոլորտում:

Սույն հաշվետվությունը ներկայացվում է հետազոտության մեթոդաբանությունը և արդյունքները, ինչպես նաև տվյալների հավաքագրման գործիքակազմը հավելվածում:



Հետազոտության մեթոդաբանություն

Մեթոդաբանական հենք

Ներառականության սահմանման և հետազոտական հարցերի մշակման համար հիմք են հանդիսացել.

- ❖ Ներառական կրթության ուսումնասիրության կենտրոնի կողմից Թոնի Բուրի համահեղինակությամբ 2011թ.-ին վերահրապարակված «Ներառման ինդեքս. դպրոցներում ուսումնառության և մասնակցության զարգացում» ձեռնարկը
- ❖ ՀՀ ԿԳՆ նախարարի կողմից 2015թ.-ին հաստատված **Հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին գնահատման** հաշվետվության ձև և մեթոդական ուղեցույց հրապարակումը

Մասնակցայնություն

ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց մասին կոնվենցիայի մշտադիտարկման ձեռնարկում առաջարկվող սկզբունքի համաձայն հետազոտության իրականացման տարբեր փուլերում ներգրավվել են հաշմանդամություն ունեցող անձիք և ոլորտում շահերի պաշտպանության նախաձեռնություններով հանդես եկող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Գործիքների մշակման փուլում խորհրդակցվել են հաշմանդամություն ունեցող անձիք:

Ֆոկուսխմբային քննարկումների հարցաշարերի մշակումը, քննարկումների վարումն ու տեղեկատվության առջանային վերլուծությունը տեղի է ունեցել Երևանում գործող «Մենք կարող ենք», «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ», «Սպիտակ բազե» ՀԿ-ների կողմից, որոնք գործում են համապատասխանաբար Երևանում, Վանաձորում և Սպիտակում:

Տվյալների հավաքագրման գործիքակազմ

Դպրոցների ներառականությունը ուսումնասիրելու համար ընտրվել է մի քանի մոթո, որը հնարավորություն է տվել ապահովելու ներառականության համապարփակ ուսումնասիրություն և տեղակատվության հավաքագրման մասնակցայնությունը:

■ Մոնիթարինգային այցեր դպրոցներ (Հավելված 1)

- **Հարցազրույց 76 դպրոցի տնօրենների հետ**
- **Փաստաթղթերի վերլուծություն:** Ներառական քաղաքականության և պրակտիկաների ուսումնասիրության նպատակով ՀԿ մասնաճյուղերի մասնագետները ուսումնասիրել են բոլոր դպրոցների զարգացման ծրագրերն ու կայքերը:

■ **Հարցաթերթիկային հարցման** միջոցով հարցվել են Տավուշի մարզի 82 դպրոցների 366 ուսուցիչ (Հավելված 2.1), 298 ԿԱՊԿՈԻ սովորողի ծնող (Հավելված 2.2): Հարցումը իրականացվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող

սովորողների ծնողների կողմից Հուլիսի կամուրջ ՀԿ-ի մասնաճյուղերի համապատասխան կարգավորումների հիման վրա:

✦ **Ֆուկուսխմբային քննարկումներ** (ՖԽՔ) Տավուշի մարզի դպրոցների ուսուցիչների (Հավելված 3.1) և ծնողների հետ (Հավելված 3.2): ՖԽՔ հարցերի ուղեցույցը մշակվել է և քննարկումները իրականացվել է քաղաքացիական հասարակության՝ հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Ուսուցիչների խմբերը ունեցել են 8-10-ական մասնակիցներ՝ դասվարներ և առարկայական ուսուցիչներ գյուղական և քաղաքային համայնքներից համամասնական ներկայացվածությամբ: Ծնողների խմբերը եթել են խառը՝ բաղկացած ԿԱՊԿՌԻ և ԿԱՊԿ չունեցող սովորողների ծնողներից գյուղական և քաղաքային համայնքներից:

Արդյունքներ/բացահայտումներ

Ներառական քաղաքականություն

Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ Տավուշի մարզի դպրոցները մեծամասամբ որդեգրել են ներառական քաղաքականության բաղկացուցիչները: Դպրոցների քաղաքականության ներառականության ցուցիչների տարածվածությունը ներկայացված է «Աղյուսակ 1»-ում:

Աղյուսակ 1. ՆԵՐԱՌԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՂԿԱՑՈՒՑԻԶՆԵՐԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ	
1. Զարգացման ծրագրի նպատակի ձևակերպման մեջ առկա՞ է ներառական կրթության զարգացման վերաբերյալ դրույթ:	97%
2.1. Դպրոցի զարգացման ծրագրում պլանավորվա՞ծ են ներառական կրթության ապահովման համապատասխան միջոցառումներ:	89%
2.2. Դպրոցի զարգացման ծրագրում պլանավորված են ուսուցիչների վերապատրաստումներ ներառական կրթության թեմայով:	76%
3. Դպրոցն ունի ներառական կրթության գործընթացի համակարգման լիազորություններով օժտված տնօրենի տեղակալ:	70%
4.1. Դպրոցի վեբ կայքում գործո՞ւմ է ներառական կրթության բաժին:	31% (հաշվարկվել է վեբ կայք ունեցող դպրոցների համար)
4.2. Դպրոցի վեբ կայքում գործող ներառական կրթության բաժինը ունի՞ ընտանիքի և համայնքի հետ հետադարձ կապի հնարավորություն:	20% (հաշվարկվել է վեբ կայք ունեցող դպրոցների համար)

Դպրոցների միայն մոտ **20%**-ն է բոլոր ներկայացված ցուցիչներով ունի ներառական ռազմավարություն:

Աշխատակազմի գիտելիք և հմտություններ


Տնօրենների կամ տնօրենների տեղակալների հետ անց կացված հարցազրույցի շրջանակում 68-ը (89%-ը) նշել են, որ վերջին 5 տարում դպրոցի մասնակցել են ներառական հաստատությունների կառավարման թեմայով վերապրաստման: Նույն հարցազրույցի համաձայն հետազոտված դպրոցներում ներառական կրթության թեմաներով վերապատրաստվել են դասվարների և առարկայական ուսուցիչների 96%-ը և 95%-ը համապատասխանաբար:

Աղյուսակ 2. ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ	
1. Վերջին 5 տարում տնօրինությունը մասնակցել է ներառական կրթության կառավարման թեմայով վերապատրաստման	89%
2. Դպրոցը ունի ներառական կրթության թեմաներով վերապատրաստող առնվազն 1 ուսուցիչ	89%
3. Դպրոցի դասվարների առնվազն 90%-ը վերապատրաստվել է վերջին 2 տարվա ընթացքում:	90% (Զի հաշվարկվել ավագ դպրոցների համար)
4. Դպրոցի առարկայական ուսուցիչների առնվազն 90%-ը վերապատրաստվել է վերջին 2 տարվա ընթացքում:	88%

Դպրոցների մոտ **60%**-ն է բոլոր չափանիշներով միաժամանակ զինված համապատասխան գիտելիքներով և հմտություններով՝ իրականացնելու ներառական կրթություն:

Մինչդեռ ուսուցիչների շրջանում իրականացված ընտրանքային հարցման արդյունքների համաձայն ներառական կրթության թեմայով վերապատրաստվել են ուսուցիչների 79%-ը, ընդ որում մոտ 60%-ը մատնանշել են «Ապրել միասին, սովորել միասին» ծրագրի 2016թ.-ի դեկտեմբեր-նոյեմբեր ամիսներին իրականացված վերապատրաստումը: «Գծապատկեր 1»-ում ներկայացված է ուսուցիչների կողմից մատնանշված վերապատրաստող հաստատությունը:

Գծապատկեր 1. Ու՞մ կողմից կազմակերպված վերապատրաստմանն էք մասնակցել



Հարցմանը մասնակցած ուսուցիչների 31%-ը նշում են, որ ներառական կրթության արդյունավետ կազմակերպման համար ունեն հավելյալ վերապատրաստումների կարիք: Մասնավորապես մատնանշվել են հետևյալ թեմաները.

- Դասավանդման նոր մեթոդիկաներ
- Մանկավարժական հոգեբանություն
- ԱՌԴ-ի կազմում և վարում
- Ուսուցչի օգնականի դերի սահմանում և գործառույթներ

Ռեսուրսներ

Մատչելիություն


Ուսումնական հաստատություններում տեղաշարժման խնդիր ունեցող սովորողների համար ֆիզիակական մատչելիության չափման համար դպրոցի տնօրինությանը ուղղվել է հետևյալ հարցերը.

- Դպրոցի շենք հարթ է՞ կամ ունի՞ քաղաքաշինության չափանիշներին համապատասխանող թեքահարթակ: (74%)
- Դպրոցի սանհանգույցը մատչելի է հենաշարժական խնդիր ունեցող անձանց համար: (50%)
- Դպրոցի մարզադահլիճը և հանդերձարանը մատչելի է հենաշարժական խնդիր ունեցող սովորողի համար: (43%)
- Դպրոցի հանդիսությունների դահլիճը մատչելի է՞ հենաշարժողական խնդիր ունեցող հանդիսատեսի և ելույթ ունեցողի համար: (43%)
- Դպրոցի շենքը միհարկանի է՞ կամ ունի՞ վերելակ: (9%)


11% դպրոցներում առկա են ուսումնամեթոդական նյութեր և սարքավորումներ՝ լսողության գործառույթի բացակայության կամ սահմանափակում ունեցող սովորողների համար, 10%-ում՝ տեսողության գործառույթի բացակայության կամ սահմանափակում ունեցող սովորողների համար:

Աջակցության թիվ

Դպրոցների 57%-ում գործում է ԿԱՊԿ ունեցող սովորողների հոգեբանամանկավարժական աջակցության թիմ: «Գծապատկեր 2.2»-ում երևում է, որ որպես կանոն վերջիններս ունեն 1 կամ 2 մասնագետ:



Դպրոցում աշխատող հոգեբանամանկավարժական աջակցության մասնագետների հանրույթը հիմնականում բաղկացած է ուսուցչի օգնականներից («Գծապատկեր 2.2»):



Ռեսուրս-սենյակ

Դիտարկված դպրոցների 89%-ը ունի պատշաճ պերպոլ կահավորված, դիդակտիկ նյութերով հագեցված ռեսուրս սենյան ԿԱՊԿ ունեցող սովորողների համար: Ռեսուրս սենյակ չունեցող 8 դպրոցներից 3-ը չունի ԿԱՊԿ աշակերտ, մեկը՝ 1, երկուսը՝ 2, երկուսը 3 սովորող:

Դպրոցներում գործող 81% ռեսուրս սենյակներում ծառայություն ստանում են դպրոցի բոլոր ԿԱՊԿՈՒ աշակերտներին, 14%-ում՝ կեսից ավելին, 5%-ում՝ կեսից քիչը:

Ռեսուրս-սենյակում ստացվող ծառայությունների առավել հաճախ նշվել են Դասապատրաստում, գրաճանաչություն, մաթեմատիկական հմտություններ ի զարգացումը, որը ենթադրաբար մատուցվում է ուսուցչի օգնականի կողմից: Նաև նշվել են հոգոբանական և լոգոպեդի ծառայությունները:

ԿԱՊԿ ունեցող սովորողների ծնողների/խնամակալների 83%-ը պարբերաբար այցելում են դպրոցի ռեսուրս սենյակ, այդպիսով ունենալով բովանդակային մասնակցություն իրենց երեխաների կրթության կազմակերպման գործում:


Վերաբերմունք

Դպրոցների 47%-ում 2016-2017 ուստարում տեղի են ունեցել ԿԱՊԿՈւ սովորողների նկատմամբ հանդուրժողականության ձևավորմանն ուղղված աշակերտական նախաձեռնություններ: Հատկապես մատնանշվել են հետևյալ միջոցառումները.

- Զրույցներ «Հավասարություն», «Հանդուրժողականություն», «Ընկերասիրություն», «Դեռահասների իրավունքները և պարտականությունները» թեմաներով
- Ֆիլմի/մուլտֆիլմի դիտում (Օր.՝ «Ինչպես զերծ մնալ բռնությունից»)
- Շարադրության մրցույթներ «Ազատ մարդ»
- Բանավեճեր, ցուցահանդեսներ
- Բարության դասեր

Դպրոցների միջև 12%-ի կայքում կամ աշակերտական թերթում է ԿԱՊԿՈւ սովորողների կամ հաշմանդամության թեմայով սովորողների կողմից պատրաստված նյութ, հոդվածի, լուսանկար հրապարակվել:

ԿԱՊԿՈւ սովորողների ծնողները նշել են, որ ներառական կրթությունը ունի դրական ազդեցություն ամբողջ դպրոցի համար:



Նմանատիպ գիտակցում կա նաև ԿԱՊԿ չունեցող աշակերտների ծնողների և ուսուցիչների շրջանում: Ֆոկուսխմբային քննարկումների ժամանակ հնչեցված հիմնավորումներից մեկը հետևյալն է.


Ներառական կրթությունը նպաստում է մանկավարժության զարգացմանը. Դրա շնորհիվ ուսուցիչները ավելի շատ փորձ են ձեռք բերում և հմտանում իրենց աշխատանքում, որից շահում են բոլոր երեխաները:

Իջևան, ծնող, ապագա մանկավարժ

Ծնողների մասնակցություն

Ծնողների մասնակցությունը հանդիսանում է ներառական կրթության կարևորագույն բաղկացուցիչ մաս: Ինչպես արդեն նշվեց, ԿԱՊԿ ունեցող սովորողների ծնողների/խնամակալների 83%-ը պարբերաբար այցելում են դպրոցի ռեսուրս սենյակ: ԿԱՊԿՈւ սովորողների շրջանում իրականացված հարցումը ցույց է տալիս, որ վերջիններիս միայն 73%-ն է մասնակցում ԱՌԻՊ-ի մշակմանը: Ֆոկուս խմբային քննարկումներից պարզ դարձավ, որ ծնողների «գրագիտության» պակասը ուսուցիչների կողմից դիտարկվում է որպես պատճառ ծնողների քիչ ներգրավվածության համար:


Ստորև ներկայացված աղյուսակում երևում է, որ ծնողները հակված են ավել բարձր գնահատել ծնող-ուսուցիչ համագործակցության արդյունավետությունը, քան ուսուցիչները:



Ծնողների գոհունակություն

ԿԱՊԿՈւ աշակերտների ծնողների մեծամասնությունը համարում է, որ իրենց երեխաների դպրոցներում լիարժեքորեն կամ բավարար չափով իրականացվում է ներառական կրթություն: Գծապատկեր 4-ը ցույց է տալիս, որ կան դեպքեր երբ ծնողները այդպես չեն կարծում. ֆոկուսխմբային քննարկումները ցույց են տվել, որ խնդիրներ (ուսուցչի խտրական վերաբերմունք, ԱՈւՊ-ի կազմում) սովորաբար առաջանում են միջին դասարաններում, մինչդեռ տարրական դպրոցում ներառական կրթության որակից ծնողները ունեն բարձր գոհունակություն:

Գծապատկեր 5. Որքանով է ձեր դպրոցում իրականացվում ներառական կրթություն



Ներառականության լայն հասկացմամբ

Բացի հաշմանդամությունից և կրթությունից Հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին գնահատման հաշվետվության ձև առաջարկում է դիտարկել նաև սեռը և ազգությունը՝ բացառելու դրանց բացասական ազդեցությունը սովորողի լիարժեք ներգրավման վրա: Աղյուսակ 3-ում ներկայացնում ենք այս խմբերի ներկայացվածությունը աշակերտական կառույցներում, որպես ներառման ցուցիչ:

Աղյուսակ 3. ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՄ ՏԱՐԲԵՐ ԽՄԲԵՐԻ ՆԵՐԳՐԱՎԱԾՈՒԹՅԱՆ ՏՈԿՈՍԸՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱԽՄԲՈՒԹՅԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ:		
	%-ային հարաբերակցությունը սովորողների համամասնությունում	%-ային հարաբերակցությունը աշակերտական խորհրդում /միջինացված/
1. ԿԱՊԿՈՒ սովորողներ	6%	5.74%
2. Աղջիկներ	50%	48.6%
3. Ազգային փոքրամասնություն ներկայացուցիչներ	0.14%	0.29%

Ֆոկուսխմբային քննարկումներում նշվեց որ դպրոցական կրթությունից դուրս մնալու ռիսկային խմբում են ընտանիքի ճաճանակային միգրացիայի պատճառով դպրոցը փոխող աշակերտները, ովքեր ադապտացման և լեզվի խնդիրներ են ունենում, ինչպես նաև տղա սովորողները անապահով ընտանիքներից, քանի որ ստիպված են ներգրավվել աշխատաշուկա վաղտարիքից: Տիպիկ է ուսուցիչների կողմից հետևյալ դիտարկումը.

Արդեն 7-րդ դասարանից տղա երեխաները մտածում են աշխատել:
Խաշտարակ, առարկայական ուսուցչուհի

Հավելված 1. Դպրոցների ներառականությանը ուղղված մոնիթորինգային այցի ձևաթուղթ

Այց-դիտարկում դպրոցներում

2017, նոյեմբեր-դեկտեմբեր

Համայնք՝ _____

Դպրոց՝ N _____

Դպրոցը իրականացնում է ներառական կրթություն _____ թ.-ից

Դպրոցը չի իրականացնում ներառական կրթություն

Ուսուցիչների թիվը՝ _____

Դասվարներ՝ _____

Առարկայական ուսուցիչներ՝ _____

Սովորողների թիվը՝ _____

Աղջիկ սովորողների թիվը՝ _____

ԿԱՊԿՈՒ սովորողների թիվը՝ _____

Հաշմանդամություն ունեցող սովորողների թիվը՝ _____

Տնային ուսուցում ստացող սովորողների թիվը՝ _____

Ազգային փոքրամասնությունների երեխաների թիվը՝ _____

1. Դպրոցի տնօրենն ունի ներառական կրթության գործընթացի համակարգման լիազորություններով օժտված տեղակալ (կամ այն պատվիրակված է տեղակալներից որևէ մեկին):

1. Ոչ 2. Այո (*Առաջարկել վերջինիս միանալ հարցազրույցին*)

2. Ջարգացման ծրագրի նպատակի ձևակերպման մեջ առկա՞ է ներառական կրթության զարգացման վերաբերյալ դրույթ:

1. Այո 2. Ոչ
3. Դպրոցը չունի զարգացման ծրագիր (*անցնել հարց 4-ին*)

3. Դպրոցի զարգացման ծրագրում պլանավորվա՞ծ են ներառական կրթության ապահովման համապատասխան միջոցառումներ (զրույցներ, կինոնկարների դիտումներ, քննարկումներ, կյոռ-սեղաններ, սեմինարներ, էքսկուրսիաներ և այլն):

1. Այո 2. Ոչ

4. Դպրոցի զարգացման ծրագրում պլանավորվա՞ծ են ուսուցիչների վերապատրաստումներ ներառական կրթության թեմայով

1. Այո 2. Ոչ

5. Դպրոցի վեբ կայքում գործո՞ւմ է ներառական կրթության բաժին:

1. Այո
2. Ոչ
3. Դպրոցը չունի վեբ կայք (*անցնել հարց 6-ին*)

6. Դպրոցի վեբ կայքում գործող ներառական կրթության բաժինը ունի՞ ընտանիքի և համայնքի հետ հետադարձ կապի հնարավորություն՝ գրելու նամակ կամ թողնելու մեկնաբանություն:

1. Այո
2. Ոչ

7. Դպրոցի կայքում կամ աշակերտական թերթում ԿԱՊԿ ունեցող սովորողների կամ հաշմանդամության թեմայով սովորողների կողմից պատրաստված նյութի, հոդվածի, լուսանկարի (կամ այլ) քանի՞ հրապարակում է եղել:

7.1. Նշել անունը, նյաութի տեսակը, հրապարակման ամսաթիվը

- 1) _____
- 2) _____
- 3) _____
- 4) _____

8. Դպրոցի շենք հարթ է՞ կամ ունի՞ քաղաքաշինության չափանիշներին համապատասխանող թեքահարթակ:

1. Այո
2. Ոչ

9. Դպրոցի շենքը միհարկանի է՞ կամ ունի՞ վերելակ:

1. Այո
2. Ոչ

10. Դպրոցի հանդիսությունների դահլիճը մատչելի է՞ հենաշարժողական խնդիր ունեցող հանդիսատեսի և ելույթ ունեցողի համար:

1. Այո
2. Ոչ

11. Դպրոցի մարզադահլիճը և հանդերձարանը մատչելի է հենաշարժական խնդիր ունեցող սովորողի համար:

1. Այո
2. Ոչ

12. Դպրոցի սանհանգույցը մատչելի է հենաշարժական խնդիր ունեցող անձանց համար:

1. Այո
2. Ոչ

13. Դպրոցում առկա են ուսումնամեթոդական նյութեր և սարքավորումներ՝ լսողության գործառույթի բացակայության կամ սահմանափակում ունեցող սովորողների համար:

1. Այո
2. Ոչ

14. Դպրոցում առկա են ուսումնամեթոդական նյութեր և սարքավորումներ՝ տեսողության գործառնության բացակայության կամ սահմանափակում ունեցող սովորողների համար:

- 1. Այո
- 2. Ոչ

15. Դասասենյակներում ԿԱՊԿՈւ ունեցող սովորողները նստում են վերջին նստարանին կամ այլ ձևով մեկուսացված են դասի կամ դասամիջոցի ժամանակ:

- 1. Այո
- 2. Ոչ

16. Դպրոցն իրականացնում է երեխաների հավասար իրավունքներին, հանդուրժողականությանը նվիրված և նման այլ ուսումնական ծրագրեր:

- 1. Այո
- 2. Ոչ

16.1. Եթե այո, նշել ուսումնական ծրագրի անվանումը, տևողությունը, որ դասարանների համար է կազմակերպվում

- 1) _____
- 2) _____
- 3) _____

17. Վերջին 5 տարում դպրոցի ներկայիս տնօրենը մասնակցել է ներառական հաստատությունների կառավարման թեմայով վերապրաստման

- 1. Այո
- 2. Ոչ

18. Դպրոցի դասվարներից քանի՞սն են վերապատրաստվել ներառական կրթության թեմաներով վերջին 5 տարվա ընթացքում:

19. Դպրոցի առարկայական ուսուցիչներից քանի՞սն են վերապատրաստվել ներառական կրթության թեմաներով վերջին 5 տարվա ընթացքում:

20. Դպրոցի ուսուցիչներից քանի՞սն են հանդիսանում ներառական կրթության թեմաներով վերապատրաստողներ:

21. Դպրոցում գործում է ԿԱՊԿ ունեցող սովորողների հոգեբանամասնակավարժական աջակցության թիմ:

- 1. Այո
- 2. Ոչ

21.1. ԿԱՊԿ ունեցող սովորողների հոգեբանամանկավարժական աջակցության թիմում հաստուկ մանկավարժների թիվը.

21.2. Դպրոցն ունի ԿԱՊԿՈՒ սովորողների հոգեբանամանկավարժական աջակցության թիմում սոցիալական աշխատողների թիվը.

21.3. Դպրոցն ունի ԿԱՊԿՈՒ սովորողների հոգեբանամանկավարժական աջակցության թիմում հոգեբանների թիվը.

21.4. Դպրոցն ունի ԿԱՊԿՈՒ սովորողների հոգեբանամանկավարժական աջակցության թիմում ուսուցչի օգնականների թիվը.

21.5. Դպրոցն ունի ԿԱՊԿՈՒ սովորողների հոգեբանամանկավարժական աջակցության թիմում այլ մասնագետների թիվը.

22. Դպրոցն ունի կահավորված, դիդակտիկ նյութերով հագեցված ռեսուրս-սենյակ՝ ԿԱՊԿ ունեցող սովորողների համար:

1. Այո
2. Ոչ

23. Դպրոցի ռեսուրս-սենյակ այցելող ԿԱՊԿՈւ սովորողների թիվը.

23.1. Նշել ծառայությունները, որոնք ստանում են սովորողները դպրոցի ռեսուրս-սենյակում

- 1) _____
- 2) _____
- 3) _____

24. Դպրոցի ռեսուրս-սենյակ այցելող ԿԱՊԿ ունեցող սովորողների ծնողների (խնամակալների) թիվը

25. ԿԱՊԿ չունեցող սովորողների բացակայությունների տարեկան միջին թիվը՝
ժամ/սովորող

26. ԿԱՊԿ ունեցող սովորողների բացակայությունների տարեկան միջին թիվը՝
ժամ/սովորող

27. Աշակերտական խորհրդում ընդգրկված աղջիկ սովորողների թիվը:

28. ԿԱՊԿ ունեցող սովորողների նկատմամբ հանդուրժողականության ձևավորմանն ուղղված աշակերտական նախաձեռնությունները 2016-2017 ուստարում:

- 1) _____
- 2) _____
- 3) _____
- 4) _____

29. Աշակերտական խորհրդում ընդգրկված սովորողների թիվը:

30. Աշակերտական խորհրդում ընդգրկված աղջիկ սովորողների թիվը:

31. Աշակերտական խորհրդում ընդգրկված ազգային փոքրամասնությունների երեխաների թիվը:

32. Աշակերտական խորհրդում ընդգրկված ԿԱՊԿՈՒ սովորողների թիվը:

33. Դպրոցի կողմից իրականացված՝ ներառական կրթության առնչվող արտադասարանական միջոցառումների (գրույցներ, կինոնկարների դիտումներ, քննարկումներ, կլոր-սեղաններ, սեմինարներ, էքսկուրսիաներ և այլն) :
Նշել միջոցառումը, ժամանակը, մասնակից սովորողների թիվը, մասնակից ծնողների թիվը, մասնակից ուսուցիչների թիվը:

1. _____
2. _____

3. _____
4. _____
5. _____

Շնորհակալություն տրամադրած ժամանակի համար:

Հավելված 2.1. Հարցաթերթ ծնողների համար

Դպրոցը _____

Հարցման օրը _____

Բարև Ձեզ, ես ներկայացնում եմ «Հուլիսի Կամուրջ» հասարակական կազմակերպությունը, որը «Ապրել միասին, սովորել միասին» ծրագրի շջանակում իրականացնում է դպրոցների ներառականության գնահատում: Խնդրում ենք Ձեզ մասնակցել հարցմանը՝ որպես դպրոց հաճախող երեխայի ծնող: Հարցումը կտևի ընդամենը 15 րոպե: Ձեր տրամադրած պատասխանները մեզ կօգնեն ճիշտ որոշումներ կայացնել և նպատակային աջակցություն ցուցաբերել դպրոցին:

1. Հարցման մասնակցի սեռը:

1. Իգական 2. Արական

2. Նշեք Ձեր ծննդյան թիվը:

3. Կրթությունը :

1. Տարրական
2. Միջնակարգ
3. Միջին մասնագիտական
4. Բարձրագույն

4. Ձեր ազգակցական կապը երեխայի հետ:

1. Մայրը
2. Հայրը
3. Քույր/եղբայր
4. Տատիկ/պապիկ

5. Ձեր երեխայի սեռը.

1. Աղջիկ
2. Տղա

6. Ինչպե՞ս եք ընտրել դպրոցը:

1. Ամենամոտն էր տանը
2. Հարմար էր աշխատավայրին
3. Խորհուրդ են տվել
4. Այլ(նշել) _____

7. Գո՞հ եք Ձեր ընտրությունից:

1. Շատ գոհ եմ
2. Որոշ չափով գոհ եմ
3. Այդքան էլ գոհ չեմ
4. Շատ դժգոհ եմ

8. Ի՞նչ եք հասկանում ներառական կրթություն ասելով:

9. Ձեր կողմից ներկայացված ներառական կրթությունը որքանով է իրականացվում Ձեր երեխայի դպրոցում:

1. Բացարձակապես չի իրականացվում
 2. Ավելի շուտ չի իրականացվում է
 3. Ավելի շուտ իրականացվում է
 4. Լիարժեքորեն իրականացվում է
- 95.Դժվարանում եմ պատասխանել

10. Ի՞նչ եք կարծում ներառական կրթությունը դրական է ազդում դպրոցի զարգացման վրա:

1. Այո, միանշանակ
 2. Երևի, այո
 3. Կարծում եմ ոչ
 4. Ոչ
- 95.Դժվարանում եմ պատասխանել

11. Ձեր երեխան ուրախությա՞մբ է հաճախում դպրոց:

1. Այո 2. Ոչ **9.1.Ինչու՞** _____

12. Ո՞ւնի ընկերներ:

1. Այո, շատ
2. Այո, միայն մեկը
3. Ոչ

10.1.Ինչու՞ _____

13. Մի՞րո՞ւմ է ուսուցիչներին:

1. Այո
 2. Ոչ
- 95.Դժվարանում եմ պատասխանել

14. Ի՞նչ եք կարծում, Ձեր երեխան կարողանում է լիարժեք դրսևորել իրեն դպրոցում/դասարանում:

1. Այո, շատ ակտիվ է
2. Այո, որոշ չափով
3. Ոչ

Ինչու՞ _____

95.Դժվարանում եմ պատասխանել

15. Մասնակցո՞ւմ է հանդեսներին/միջոցառումներին,

1. Այո, միշտ
2. Այո, բայց առանց դերի
3. Ոչ

Ինչու՞ _____

95. Դժվարանում եմ պատասխանել

16. Ի՞նչ հաճախականությամբ եք շփվում ուսուցիչների հետ:

3. Ամեն օր
4. Շաբաթը մի քանի անգամ
5. Շաբաթական
6. Ամիսը մի քանի անգամ
7. Ամիսը մեկ անգամ
8. Տարին մեկ անգամ
9. Երբեք

17. Ո՞ւմ նախաձեռնությամբ են պայմանավորված հանդիպումները ուսուցիչների հետ:

1. Միայն իմ
2. Հիմնականում իմ
3. Երկկողմանի՝ հավասարապես
4. Հիմնականում բազմամասնագիտական թիմի
5. Միայն բազմամասնագիտական թիմի

18. Հիմնականում ի՞նչ հարցեր եք քննարկում ուսուցիչների հետ:

19. Ինչպե՞ս կգնահատեք ուսուցիչների հետ համագործակցության արդյունավետությունը 1-5 բալանոց սանդղակով:

_____ 1 _____ 2 _____ 3 _____ 4 _____ 5 _____

բացարձակապես անարդյունավետ

չափազանց արդյունավետ

20. Հիշում եք դեպքեր, երբ ուսուցիչը որևէ խորհուրդ է հարցրել Ձեզանից:

1. Այո
2. Ոչ

21. Ի՞նչ հաճախականությամբ եք շփվում բազմամասնագիտական թիմի հետ:

1. Ամեն օր
2. Շաբաթը մի քանի անգամ
3. Շաբաթական
4. Ամիսը մի քանի անգամ
5. Ամիսը մեկ անգամ
6. Տարին մեկ անգամ
7. Երբեք

22. Ո՞ւմ նախաձեռնությամբ են պայմանավորված հանդիպումները բազմամասնագիտական թիմի հետ:

6. Միայն իմ
7. Հիմնականում իմ
8. Երկկողմանի՝ հավասարապես
9. Հիմնականում բազմամասնագիտական թիմի
10. Միայն բազմամասնագիտական թիմի

23. Հիմնականում ի՞նչ հարցեր եք քննարկում բազմամասնագիտական թիմի հետ:

24. Ինչպե՞ս կգնահատեք բազմամասնագիտական թիմի հետ համագործակցության արդյունավետությունը 1-5 բալանոց սանդղակով:

_____ 1 _____ 2 _____ 3 _____ 4 _____ 5 _____

բացարձակապես անարդյունավետ

չափազանց արդյունավետ

25. Եղե՞լ են դեպքեր, որ Ձեր երեխայի հետ կապված ուսուցիչը դժգոհություն կամ մտահոգություն է հայտնել:

1. Ոչ, երբեք _____ անցում հարց 27
2. Այո, ինչու՞ _____
95.Դժվարանում եմ պատասխանել

26. Դա արվել է առանձին, թե՞ այլ ծնողների/երեխաների ներկայությամբ:

1. Առանձին
2. Ժողովի ժամանակ
3. Բոլորի ներկայությամբ
4. Այլ _____

27. Ձեր երեխայի հետ անհատական պարապմունքներ տարվո՞ւմ են:

1. Ոչ
2. Այո
Մասնավորեցնել _____

28. Ձեր երեխայի համար երբեք մշակվե՞լ է անհատական զարգացման/ուսումնական պլան:

1. Այո
2. Ոչ անցում հարց 31
3. Տեղյակ չեմ անցում հարց 31

29. Դուք մասնակցե՞լ եք ուսումնական/զարգացման պլանի մշակմանը:

1. Այո
2. Ոչ
Այլ նշում _____

30. Դուք մասնակցե՞լ եք պլանի գնահատմանը, տեղյա՞կ եք արդյունքներից:

1. Այո
2. Ոչ
Այլ նշում _____

31. Երբևէ մասնակցե՞լ եք ներառական կրթության դասընթացների:

1. Այո
2. Ոչ անցում հարց 33
Այլ նշում _____

32. Ո՞վ է այն կազմակերպել

1. Դպրոցը
2. Այլ կազմակերպություն
Մասնավորեցնել _____
3. Դժվարանում եմ պատասխանել

33. Ունե՞ք մտահոգություններ/առաջարկություններ ներառական կրթության հետ կապված Ձեր դպրոցում այն բարելավելու կապակցությամբ:

1. Այո
Մասնավորեցնել _____

2. Ոչ

Շնորհակալություն Ձեր ժամանակի և պատասխանների համար

4. Դժվարանում եմ պատասխանել

7. Ի՞նչ եք հասկանում ներառական կրթությունն ասելով:

8. Ձեր կողմից ներկայացված ներառական կրթությունը որքանով է իրականացվում Ձեր դպրոցում:

5. Բացարձակապես չի իրականացվում
6. Ավելի շուտ չի իրականացվում
7. Ավելի շուտ իրականացվում է
8. Լիարժեքորեն իրականացվում է
9. Դժվարանում եմ պատասխանել

9. Ձեր կողմից դասավանդվող դասարաններում կա՞ն դասարանում/խմբում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք/ հաշմանդամություն ունեցող աշակերտներ:

1. Այո, քանի՞սն են _____,
2. Ոչ
3. Դժվարանում եմ պատասխանել

10. Եթե այո, ապա ի՞նչ դժվարություններ ունեն հիմնականում(*Հնարավոր է բազմակի պատասխան*):

1. Հենաշարժողական
2. Տեսողական
3. Լսողական
4. Հոգեբանական
5. Վարքային
6. Մտավոր
7. Խոսքային
8. Այլ _____

11. Ինչպե՞ս եք իմացել երեխայի դժվարությունների մասին:

1. Ծնողն է զգուշացրել,
2. Տեղեկացրել են պոլիկլինիկայից
3. Երեխան ունի ԿԱՊԿ-ի գնահատման համապատասխան վկայական
4. Իմ դիտարկման արդյունքում
5. Այլ _____

12. Դուք անցե՞լ եք ներառական կրթության թեմայով վերապատրաստում:

1. Այո

Ե՞րբ (Եթե հիշում եք, նշեք վերջին վերապատրաստման օրը, ամիսը թիվը)

2. Ոչ

Անցում հարց 14-ին

13. Ու՞մ կողմից է կազմակերպված եղել (Հնարավոր է մեկից ավելի պատասխան):

1. Կրթության ազգային ինստիտուտի
2. Գնահատման կենտրոն
3. Հուլյսի կամուրջ ՀԿ
4. Այլ _____

14. Կարիք ունե՞ք նոր դասընթացների:

1. Այո
2. Ոչ

Անցում հարց 16-ին

15. Ի՞նչ թեմաների/հարցերի շուրջ:

16. Ի՞նչ հաճախականությամբ եք շփվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների ծնողների հետ:

10. Ամեն օր
11. Շաբաթը մի քանի անգամ
12. Շաբաթական
13. Ամիսը մի քանի անգամ
14. Ամիսը մեկ անգամ
15. Տարին մեկ անգամ

16. Երբեք

Անցում հարց 20-ին

17. Ո՞ւմ նախաձեռնությամբ են պայմանավորված հանդիպումները կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների ծնողների հետ:

11. Միայն իմ
12. Հիմնականում իմ
13. Երկկողմանի՝ հավասարապես
14. Հիմնականում ծնողների
15. Միայն ծնողների
16. Դժվարանում եմ պատասխանել

18. Հիմնականում ի՞նչ հարցեր եք քննարկում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների ծնողների հետ:

19. Ինչպե՞ս կգնահատեք կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների ծնողների հետ համագործակցության արդյունավետությունը 1-5 բալանոց սանդղակով:

_____ 1 _____ 2 _____ 3 _____ 4 _____ 5 _____

բացարձակապես անարդյունավետ

չափազանց արդյունավետ

20. Ի՞նչ հաճախականությամբ եք շփվում դպրոցի բազմամասնագիտական թիմի հետ:

8. Ամեն օր
9. Շաբաթը մի քանի անգամ
10. Շաբաթական
11. Ամիսը մի քանի անգամ
12. Ամիսը մեկ անգամ
13. Տարին մեկ անգամ
14. Երբեք

Անցում հարց 24-ին

21. Ո՞ւմ նախաձեռնությամբ են պայմանավորված հանդիպումները բազմամասնագիտական թիմի հետ:

1. Միայն իմ
2. Հիմնականում իմ
3. Երկկողմանի՝ հավասարապես
4. Հիմնականում բազմամասնագիտական թիմի
5. Միայն բազմամասնագիտական թիմի

6. Դժվարանում եմ պատասխանել

22. Հիմնականում ի՞նչ հարցեր եք քննարկում բազմամասնագիտական թիմի հետ:

23. Ինչպե՞ս կգնահատեք բազմամասնագիտական թիմի հետ համագործակցության արդյունավետությունը 1-5 բալանոց սանդղակով:

_____ 1 _____ 2 _____ 3 _____ 4 _____ 5 _____

բացարձակապես անարդյունավետ

չսովորական արդյունավետ

24. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար մշակվում է անհատական ուսուցման պլան (ԱՈւՊ):

1. Այո
2. Համարյա միշտ **Ո՞ր դեպքերում չի մշակվում** _____
3. Ոչ **Ինչու՞** _____
4. Դպրոցում չի սովորում ԿԱՊԿՈւ աշակերտ **Անցում հարց 28-ին**
5. Դժվարանում եմ պատասխանել

25. Դուք մասնակցում եք անհատական ուսուցման պլանների մշակմանը:

1. Այո, դա պարտադիր է
2. Մասնակցում եմ, երբ նեղմասնագետները հրավիրում են
3. Ինձ հրավիրում են, բայց ես չեմ մասնակցում
4. Ոչ, ես տեղյակ չեմ, որ պետք է մասնակցել

Այլ նշում _____

26. Աշակերտների ծնողները մասնակցում են ԱՈւՊ-ների մշակմանը:

1. Այո, դա պարտադիր է
2. Մասնակցում են, երբ նեղմասնագետները հրավիրում են
3. Հրավիրում են, բայց ես չեմ մասնակցում
4. Ոչ, ես տեղյակ չեմ, որ պետք է մասնակցեն

Այլ նշում _____

27. Ինչպե՞ս եք գնահատում/ամփոփում ԱՈԻՊ-ների կատարումը:

1. Երեխայի հետ աշխատող մասնագետների հետ համատեղ
2. Հրավիրում ենք ծնողին և համատեղ ամփոփում առաջընթացը
3. Հիմք են վերցնում տարվա ընթացքում երեխայի զարգացման նպատակները և դրանց հասնելու հաջողությունները
4. Այլ _____
5. Անհատական ուսումնական/զարգացման պլաններ դեռ չենք մշակում

28. Ինչպե՞ս եք տեղեկացնում ծնողներին երեխաների դժվարությունների/խնդիրների մասին:

1. Անհատական հանդիպումների ժամանակ
2. Ծնողական ծողովների ժամանակ
3. Հեռախոսով
- Այլ նշում _____

29. Ծնողների համար կազմակերպում եք դասալսումներ :

1. Այո, միշտ, դա պարտադիր է
2. Երբեմն
3. Անհրաժեշտության դեպքում/ երբ ծնադն է ցանկանում
4. Ոչ, ես տեցյակ չեմ, որ պետք է նման բան կազմակերպել

Այլ նշում _____

30. Ունե՞ք մտահոգություններ/առաջարկություններ ներառական կրթության հետ կապված Ձեր դպրոցում այն բարելավելու կապակցությամբ:

3. Այո
Մասնավորեցնել _____
4. Ոչ

Շնորհակալություն ժամանակի և պատասխանների համար

Հավելված 3.1. Ուսուցիչների շրջանում ֆոկուսաբային քննարկման ուղեցույց

Ներածություն. Ներառական դպրոցի սահմանումը

Ի՞նչ էք հասկանում ներառական կրթությունն ասելով: Որո՞նք են ներառական և ինտեգրատիվ կրթությունների տարբերությունները:

Եթե դուք մտել էք դպրոց, ու պետք է հասկանաք՝ արդյոք դպրոցը իրականացնում է ներառական կրթություն, թե՞ ոչ, ինչի՞ն կնայեք առաջին հերթին:

Կարծում եք Ձեր դպրոցում պատշաճ կերպով իրականացվում է ներառական կրթություն: Որո՞նք են շտկման/բարելավման ենթակա կողմերը:

Ո՞ր գաղափարների հետ եք կապում ներառական կրթությունը: *(մատչելիություն, երեխայակենտրոն մոտեցում)*

Ի՞նչ էք հասկանում մատչելիությունն ասելով: Ձեր դպրոցը մատչելի՞ է: Ինչու՞ եք այդպես կարծում:

Ի՞նչ առընչություն ունի երեխայակենտրոն ուսուցումը ներառականության հետ: Ի՞նչ էք հասկանում երեխայակենտրոն ուսուցումն ասելով: Ձեր դպրոցում իրականացվում է երեխայակենտրոն ուսուցում: Բերեք օրինակներ:

Ձեր կարծիքով ո՞ր խմբի երեխաների ներառմանն է ուղղված ներառական կրթությունը:

ԱՌԻՊ

Ի՞նչ դեր ունի անհատական ուսուցման պլանը ներառական կրթության կազմակերպման գործընթացում: Ո՞րն է դրա գործառույթը:

Արդյոք ԱՌԻՊ-ը՝ որպես ներառական կրթության կազմակերպման գործիք արդյունավետ է: Ինչպե՞ս կբարելավեիք այն:

Նկարագրեք ԱՌԻՊ-ի մշակման և վերանայման գործընթացը: Ո՞ր փաստաթղթերի վրա եք հիմնվում:

Ովքե՞ր են մասնակիցները:

Համագործակցություն

Ձեր դպրոցում գործում է **բազմամասնագիտական թիմը**: Ի՞նչ մասնագետներ ունեք:

Ունեք բազմամասնագիտական թիմի հետ հանդիպում/քննարկումների մշակված ձևաչափ և ժամանակացույց: Ինչպիսի՞նն է:

Համագործակցում եք արդյոք ԿԱՊԿՈՒ սովորողների ծնողների հետ:

Կարևոր է արդյոք ծնողների հետ համագործակցությունը: Խնդրում եմ մտաբերել դեպք, երբ համագործակցության արդյունքում լուծել էք Ձեր առջև դրված մանկավարժական խնդիրը:

Մյուս ծնողների հետ համագործակցությունը

Մասնագիտական կարողություններ

Արդյոք վերապատրաստումների մասնակցե՞լ էք: Ու՞մ կողմից էր իրականացվում:

Եղե՞լ է որ վերապատրաստման արդյունքում տվել էք ընթացիկ խնդիրների լուծում, կիրառում էք նոր մեթոդներ: Թե՞ արդեն ունեք փորձված մեթոդը:

Ձեռնարկի բովանդակությունը ինչպես էք գնահատում և արդյոք կիրառու՞մ էք աշխատանքի մեջ:

Ձեր կարծիքով վերապատրաստման տևողությունը ճի՞շտ էր սահմանված:

Հավելված 3.1. Ծնողների շրջանում ֆոկուսխմբային քննարկման ուղեցույց

Ներածություն. Ներառական դպրոցի սահմանումը

1. Ի՞նչ էք հասկանում ներառական կրթությունն ասելով: Որո՞նք են ներառական և ինտեգրատիվ կրթությունների տարբերությունները:
2. Եթե դուք մտել էք դպրոց, ու պետք է հասկանաք արդյոք դպրոցը իրականացնում է ներառական կրթություն, թե ոչ, ինչի՞ն կնայեք առաջին հերթին:
3. Կարծում եք Ձեր դպրոցում պատշաճ կերպով իրականացվո՞ւմ է ներառական կրթություն: Որո՞նք են շտկման/բարելավման ենթակա կողմերը:
4. Ո՞ր գաղափարների հետ եք կապում ներառական կրթությունը: *(մատչելիություն, երեխայակենտրոն մոտեցում)*
5. Դուք որպես ծնող կարծու՞մ եք, որ բոլոր երեխաների իրավունքները հավասարապես պաշտպանված են դպրոցում: Եթե ոչ, եկեք քննարկենք դեպքեր, բերեք օրինակներ:
6. Ի՞նչ էք հասկանում մատչելիությունն ասելով: Ձեր դպրոցը մատչելի՞ է: Ինչու՞ էք այդպես կարծում:
7. Ձեր կարծիքով ո՞ր խմբի երեխաներն են շահում ներառական կրթությունից:

ԱՌԻՊ

8. Ի՞նչ գիտեք ԱՌԻՊ-ի մասին: Ի՞նչ դեր ունի անհատական ուսուցման պլանը ներառական կրթության կազմակերպման գործընթացում: Ո՞րն է դրա գործառույթը:
9. Դուք մասնակցու՞մ եք Ձեր երեխայի ԱՌԻՊ-ի մշակմանը:
10. Արդյոք ԱՌԻՊ-ը՝ որպես ներառական կրթության կազմակերպման գործիք արդյունավե՞տ է: Ինչպե՞ս կբարելավեիք այն:

Համագործակցություն

11. Ինչպե՞ս էք համագործակցում **ուսուցիչների** հետ:
12. Արդյոք ուսուցիչների հետ համագործակցությունը նպաստու՞մ է Ձեր երեխայի կրթության արդյունավետ կազմակերպմանը:
13. Ձեր դպրոցում գործու՞մ է **բազմամասնագիտական թիմը**: Ի՞նչ մասնագետներ ունեք:
14. Ունե՞ք բազմամասնագիտական թիմի հետ հանդիպում/քննարկումների մշակված ձևաչափ և ժամանակացույց: Ինչպիսի՞նն է:
15. Ի՞նչ կցանկանայիք հավելել: